

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՁԱՐԾԱՅԻՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԵԶԻՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻՒ 25

“ՏԱՃԱՐ,” ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրուս
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքի կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեիքիաւ, Հայոց եկեղեցի

در سماعتده بشکطاشده ارمنى کلیساستده (داجار) فزته سی مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՉՈՒՄԱՆ

Զարմայր թըրլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հրապրեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ


1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալլոճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԲ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊԱԷԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.—Տ. Ռուբէն Բնյ. Գաւրիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդ. Գալթեանեան
ԱՅՆՔԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՐՈՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւունի
ԵՂԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕՋԱՍ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքեան
ԵՐՋՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտանճեան
ԶՄԻՒՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Սարգիսեան
ԷԱԿԻՇԷՀԵՐ.—Տ. Քալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սաստէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
ՄԱՆՉԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս. Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան
ՄԱՐՋՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պրապեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բազարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ. Տառեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէհնեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԷՔԻՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մազլումեան
ՊԱՂՏԱՍ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս. Եպիսկ. Կէօմրիւքճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊԵՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկիլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպիսկ. Արչարունի
ՌՈՒՍՃՈՒԲ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըլնիկեան
ՌՈՏՏՈՒԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթոլ Ա. Բնյ. Թաղմճեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապալեան
ՍԵՐԱՍԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնեսիոս Բնյ. Տրէդեան
ՏԷՏԷ—ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօփլէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձապուն Բնյ. Բիպարեան
ՔԷՍՈՒՆԷՆԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մանիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ. Յիւլիոյ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ.—Յակոբ էֆ. Նչկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 25

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Փրկութեան Աւետարանը, ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԵՄԵԱՆ.—Վերանորոգութիւն Հայ եկեղեցւոյ, (Դ. Յօդուած, Շար.) ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍԼԱՆԵԱՆ.—ԿՐՕՆԱԿԱՆՏՄԱՆԱՆ, Ստեփանոս Որեւնցի, (Շար.) ԵՂԻՏԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ.—Բարին Յիսուս (Քերթուած), ՍՏ. Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ.—Պէշկիկաշցիներու որդեգիրները Հաճնոյ որբանոցին մէջ, ԶԱՐՄԱՅՐ ՔԶ.—Եկեղեցիին ծիսական քարկարգութիւնը, Աշխարհականի մը ծայնը, Մ. ՍԱՆՈՍԵԱՆ.—Ահմէտ Ա խոյսած էՖ. Եւ Գէղիւրեան Թաղոս Պատուելի, ԱՐԲԱՀԱՄ ՔԶ. ԷՊԷԵԱՆ.—ԱԶԳԱՅԻՆ ԿԵՍԱՆԻՔԸ, Շարժուան լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱԻՏԱՐԱՆԸ

Յիսուսի քարոզած Աւետարանին սեպհական նկարագրին, իսկական իմաստին և ոգւոյն թափանցել բաւական է, համոզուելու համար թէ ճշմարտապէս Փրկութեան Աւետարանն է այն: Ստոյգ է որ Յիսուսի քարոզութիւնները միւս մասամբ աւանդախառն յանկարծաբանութիւններ և ժողովրդի կեանքին պատշաճեցումներ են, պարզ ու բազմակողմանի: Բայց այդ քարոզութիւնները ներշնչող ընդհանուր ոգին և հո՛ն արտաբայտուած գաղափարներն ըմբռնելով համար, պէտք է խուսափիլ մանրամասնութիւններից, և մէկ կողմ առնել պատմական պարուրանքները:

«Զկայ ա՛յնքան ցրուած ուսուցում մը—ինչպէս կ'ըսէ Սապաթիէ—որքան Յիսուսներ, և սակայն ո՛չ մէկ ուսուցում այնքան որոշ է և ճշմարիտ»: Սապաթիէի այս խօսքերը շատ յատկանշական են և կրնանք իբրեւ զօրաւոր ապացոյց մը նկա-

տել այն կարգ մը quasi-քննադատներուն համար, որոնք Յիսուսի քարոզութիւններուն տեսական գոյն մը տալով, անբաւական կը գտնեն զանոնք իբրեւ միջոց մարդկային փրկութեան: Եւ սակայն որքան ալ ուշադրութեամբ կարդանք Աւետարանը, հոն չենք հանդպիր բնաւ ո՛ր և է գաղափարի կամ ուսուցումի որ տեսական ըլլայ. ընդհակառակն Յիսուս բարոյական գործունէութեան և առօրեայ կեանքի գործնական օրինակներով և ասուցումներով համեմատ է միշտ իր քարոզները: Այդէն Յիսուս ո՛չ թէ հմուտ վարդապետի կամ փիլիսոփայի, այլ աւելի բռնի տիտղոսին արժանանալու կը հետամտէր: Եւ իսկապէս իբրեւ մի պարզ բժիշկ, նոր ու առողջ կեանքով մը վերակենդանացած կ'ուզէր տեսնել վատառողջ մարդկութիւնը: Ա՛յս էր իր գործը, ա՛յս էր իր գերագոյն նպատակը: Սորվեցնելը իրեն համար բժշկելու միջոց մըն էր: Այս կերպով կը յատկանշէ իր պաշտօնը՝ Յովհաննէս Ակրտչի կողմէ եկած պատգամաւորներուն, և ի նազարէթ իր առաջին քարոզութիւններուն մէջ:

Արդ, այսքան որոշ կերպով իր պաշտօնին բնոյթը յատկանշող գերերկրային անհատի մը հետ, լոկ գաղափարներու վրայ վիճարանիլ ապարդիւն աշխատութիւն մըն է ինքնին. վասն զի Յիսուսի շնորհածին ու մեր պահանջածին մէջ անհուն անձրպետներ կան: Այսպէս, Պղատոն մը կը հարցնէ թէ ի՞նչ յարաբերութիւն կայ գաղափարականին և իրականին միջև: Լաբլաս մը կ'ուզէ գիտնալ թէ ի՞նչ է տիեզերքի ծագումը: Քննադատը կ'ուզէ գիտնալ թէ Մովսէսի վերագրուած գիրքերը ի՞նչ են թէ ոչ: Այսօր տակաւին շատեր կասկածանքով կը դիտեն այն հոգեկան երեւոյթները, որոնք հաւատքի և զգացումի հետ կապուած են և ո՛չ թէ բանականութեան և գրական փիլիսոփայութեան: Իսկ Յիսուս իբր թէ բնաւ լսած չըլլար այս պահանջումներն ու հարցումները, իր քաղցր ու «ահագին» ձայնով կը պատասխանէ. «Երանի աղքատաց զի նոցա է արքայութիւնն երկնից: Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի այնոցիկ որք սուրբ են սրտիւք...: Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք...»

«Յիսուս, ինչպէս կ'ըսէ Փասգալ Աղեքսանդրի շքեղութեամբ և Արքիմեդէսի հանճարով և գիտութեամբ չէ եկած աշխարհ և պէտք չունէր գալու»: Եւ իսկապէս եթէ երբէք ըմբռնենք Աւետարանի ոգին, պիտի տեսնենք սր անիկա աշխարհ եկաւ՝ մղուած սրբութեան և մարդասիրութեան այն գերազանց զգացումէն, որով տոգորուած էր ի յառաջագունէ (a priori): Այդ անդիմադրելի զգացումին աղբեցութեան տակ, իր առաջին գործը եղաւ ուղղակի սրտերուն դիմել. որովհետեւ իր իսկ վկայութեամբ հոն էին կեանքին աւերը: Այդ աւերը բանալու և մաքրելու համար նուիրեց իր ամբողջ ոյժը. վասնզի վստահ էր թէ զանոնք վերանորոգելով, վերանորոգած պիտի ըլլար ամբողջ կեանքը, հոգ չէր թէ ապագայ մարդկութիւնը քննադատէր իր գործածած պղազան միջոցները: Արդէն Յիսուս երբէք կարեւորութիւն չէր ընծայեր ձեւերուն և միջոց-

ներուն, որովհետեւ իր վստահութիւնը տեսականութիւններէ և գաղափարներէ աւելի, իր Բանին ճշմարտութեան վրայ կը կեդրոնացնէր: Այս իսկ պատճառաւ իր ներկայութիւնը միայն բաւական էր՝ հոգիններուն վրայ ներգործելու համար. ներկայանալու ձեւերը և միջոցները արդէն անկարելորդ կը նկատուէին:

Յիսուս որ հակառակ էր փարիսեցիական ձեւակերպութիւններուն, անշուք կերպով կը կիրարկէր իր պաշտօնը, մեղմօրէն կը տարածէր իր գաղափարները, և կը ջանար սերտ յարաբերութիւն մը մշակել այն խաւարակուռ հոգիներուն հետ, որոնք պէտք ունէին Փրկութեան Աւետարանի լոյսին: Ստոյգ է որ իր քարոզութիւնները և գաղափարները վախճանաբանական (eschatologique) ձեւ մ'ունին, իբրեւ բնական հետեւանք իր ժամանակի ոգւոյն, բայց այդ ձեւը պարզապէս կարծրակեղեւ պտուղի մը կը նմանի. պէտք է կոտրել զայն՝ քաղցր ու փափուկ միջուկը ճաշակելու համար: Այդ միջուկին ճաշակմամբ միայն կարելի է ընտելանալ Յիսուսի բարոյական սկզբունքներուն, և ապահովել մեր փրկութեան և բժշկութեան գործը:

Ըստ Յիսուսի, բժշկել և փրկել բառերը հոմանիշ են իրարու: Անա քե ինչո՞ւ նախա իր Աւեստաւնը փրկութեան Աւեստաւնն է իսկապէս:

«Փրկութիւնը — ինչպէս կ'ըսէ Կօպլօ — ամէն կրօնքի վախճանն է»: Ծիշտ է այս. բայց նախաքրիստոնէական շրջանին և նոյնիսկ անկէ վերջ փրկութեան գաղափարը այլազան մեկնութիւններու տեղի տուած է: Հին ատեն վայրենին յաջող որսորդութիւն մը կամ ճոխ աւար մը կը պահանջէր իր Փեղկէն, որովհետեւ իր գոյութիւնը անկէ կախում ունէր: Իսրայելացիներուն համար փրկութեան գաղափարը երկարակեցութեան և աղգային ու անհատական երջանկութեան գաղափարին հետ նոյնացուցած էին:

Յիսուսի քարոզած բարոյականը և փրկութիւնը՝ սակայն բոլորովին տարբեր հանգամանք մը ունի: Անոր համար փրկութիւնը սրտի և խղճի հետ առնչու-

չութիւն ունեցող գործ մըն է պարզապէս : Փրկութիւնը, ըստ Փրկութեան Աւետարանին, չարին կապանքներէն ազատիլ և Աստուծոյ հետ որդիական անկեղծ յարաբերութեան մը մէջ մտնել կը նշանակէ : այն Աստուծոյն, որ մարդուն սրտին մէջ բնականով, իբրեւ երջանկութեան և խաղաղութեան «առատահոս աղբիւր», հոն կ'ուռնացնէ երկնային ու հոգեկան կեանքի սերմերը : Ըստ Յիսուսի, բժշկուելու և հետեւաբար փրկուելու համար, մարդ պէտք է զգայ ու խոստովանի իր մեղաւոր վիճակը : ուրիշ բացատրութեամբ, մարդը իր անձին գիտակցութիւնը ունենալու համար պէտք է ի վիճակի ըլլայ ինքզինքը դասելու : Այդ ինքնադատողութիւնը կը ստեղծէ իր մէջ մեղքին անմիջական և տիեզերական զգացումը, և այդ զգացումն է որ դարձի կը բերէ և բարոյապէս ու նիւթապէս կ'երջանկացնէ մարդը :

Յիսուս մեղքի ծագումին և էութեան վրայ չի ծանրանար ընտել, և առանց կանխամտածութեան մարդիկ երկու դասակարգի կը բաժնէ, բարի և չար, արդար և մեղաւոր : Այս վերջիններուն մէջ ինքնադատողութեան զգացումը արթնցնելու համար, առօրեայ կեանքի և ընտանեկան այլևայլ առակներ ու պատկերներ կը գործածէ : Ասիկա միջոց մըն էր նախ զղջացողներուն մէջ բարոյական տրամադրութիւններ ստեղծելու, և հօրը կողմէ հանուր աշխարհի աւետելու «բարի լուր»ը, որուն հաւատալու և փրկուելու համար Մի միայն հաւատք կը պահանջէ : — «Ուղիղ արարէք զճանապարհս ձեր, և հաւատացէք յաւետարանն» :

Մի միայն հաւատք, կ'ըսենք, այն պատճառաւ որ «ուղիղ արարէք զճանապարհս»ը և հաւատքով ու զղջմամբ առ Աստուած դառնալը իրարմէ անբաժան երկու իրիւր կը նմանին : Զղջումը հաւատքին սկզբնաւորութիւնն է, և հաւատքը զղջումին վերջաւորութիւնը :

Պէտք չէ իրարու հետ շփոթել հաւատքը և հաւատալիքը, որովհետեւ տարբեր ծագում և նշանակութիւն ունին : Հաւատքը աւետարանական իմաստով բարո-

յական փոխադարձ յարաբերութիւն մըն է մարդոց մէջ : «Հաւատքը—ինչպէս կը գըրէ Բայս—զգացումի և հոգիի տրամադրութիւն մըն է, որ էապէս կախում ունի ոչ թէ բանգիտութեան և մտային կարողութեան ու է մէկ գործունէութենէն, այլ մարդուն Աստուծոյ հանդէպ ունեցած սէրէն, իր սրտին ու կամքին զոհաբերութենէն և զղջումէն : Հաւատքը մարդուն հոգեկան կեանքին մէջ գործունէութեան սկիզբ մըն է, արտակարգ ոյժ մը :

Երբ այսպէս կ'ըմբռնենք հաւատքը, վստահ ըլլալու ենք թէ Աստուած մեզի յայտնուած է ներքնապէս, և մեր սրտին մէջ կը բնակի : Ան այս ըմբռնումին մէջ կը կայանայ Փրկութեան Աւետարանին կրօնական ինքնատպութիւնը, որ քրիստոնէութիւնը կը բաժնէ Մովսիսական և ուրիշ հին կրօնքներէն : Ուրեմն հաւատքը ծնիչն է (génératrice) հոգիի կրօնքին, վստահ զի անոր միջոցաւ է որ Աստուծոյ և մարդոց հոգին իրարու կը հանդպին, երջանիկ ու անքակտելի միութիւն մը կազմելու համար :

Բաւական է ուրեմն որքան տանջուեցաք, ո՛վ անհաւատ հոգիներ, Աւետարանէ դուրս փրկութիւն փնտռելով : Ընդունայն են ձեր փնտռումները : Աւետարանն է միայն ձեր փրկութիւնը, ճանապարհը և կեանքը : Կարդացէք Փրկութեան Աւետարանը ու անիկա պիտի վերանորոգէ զձեզ, պիտի շօրացնէ ձեր հաւատքը : Այդ երկնային Գիրքին մէջ չկայ բան մը, որ ձեր սրտին չխօսի, չյուզէ զձեզ, չխանդավառէ ու չհոգիացնէ : Հոն է որ դուք պիտի գտնէք գոհացումը ձեր մտքին, հանդարտութիւնը ձեր խղճին, ուրախութիւնը ձեր սրտին և հանգստութիւնը ձեր ամբողջ էութեան, պայմանաւ որ ստիպին անկեղծ զղջումով մը մօտենաք անոր, և ընդունիք թէ «կորուսեալ»ներուն միակ գիրքը Փրկութեան Աւետարանն է :

Սկիզբաւ ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱՆԷՄԵԱՆ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԶՈՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱՄ

Ժամերգութիւն Հայ Սկեզեցւոյ կամ
Բնութիւն Ժամագրին

Գ. (*)

Կը շարունակենք ընթերցումսն և դա-
ւանագրէն վերջը կը հանդիպինք անմիջա-
պէս «Զղջում» խորագրով հատուածին, որ
խոստովանութեան պարագային յատկացած
է, երբ առանձնականներ կուգան քահանա-
յին յայտնել իրենց հոգեկան վիճակը. կայ
մինչդեռ խոստովանութեան մասին տարբեր
կարգադրութիւն և տարբեր խմբագրուած
հատուած, երբ քահանան հրապարակաւ
պիտի խոստովանի ժողովուրդին:

«Մեղայ»ի սկիզբը կը տեսնենք որ խոս-
տովանողը կ'ըսէ... «խոստովանիմ առաջի
Աստուծոյ և առաջի սրբուհւոյ Աստուա-
ծածնին և առաջի ամենայն սրբոց»:

Խոնարհաբար դիտել պիտի տայի թէ
պէտք է յապաւել «Նւ առաջի սրբուհւոյ
Աստուածածնին և ամենայն սրբոց» հատու-
ածները. վասնզի կը կարծեմ թէ չենք
կրնար սուրբերու ամենուրեքութեան գա-
ղափարը պաշտպանել ո՛չ Սուրբ Գրքով և
ո՛չ ալ փիլիսոփայութեան ուժով. և եթէ
սուրբերու ամենուրեքութեան գաղափարը
պահ մը կարելի ըլլար պաշտպանել, անյար-
մար կը սեպէի Երանեալ Տիրամօր առջև
մեղքերու այդ ցուցահանդէսը խօսիլ: Մեղ-
քերու այդ ցուցակին մասին երկու սրբա-
գրութիւններու հանդիպած եմ ցարդ.
Կարծեմ մին Մկրեան Տէր Հօր հրատարա-
կաց աշխարհաբար ժամագրքի սկիզբը. (Ա.
տպագրութիւն) ուր չեն երեւիր «գրաս-
տական, գաղանական»ի նման անպատշաճ
բացատրութիւններ: Իսկ միւսը Լուսա-
ւորչեան բարեկարգասէր ընկերութեան հը-
րատարակած «Պատկեր Հայաստանեայց»
անուն հետաքննական գործին մէջ, ուր

նշանակուած են մինակ «Մեղայ»ի Ա. տունը,
եօթը մահացու մեղքերը պարունակող
տունը և մէյ մ'ալ վերջին տունը: Պիտի
համարձակէի դիտել տալ թէ այս վերջինն
իսկ թերի մտածուած է. պէտք է որ մի-
նակ Ա. և վերջին տունները մնային իւրեւ-
բաւական և իրեն ամբողջական ինչ: Հա-
ծիս դիւրին պիտի համոզուէր ամեն ոք,
եթէ մտադրութեամբ կարդալ յանձն առ-
նէր երկու հատուածները:

«Հայր Սուրբ» բառերով սկսող հատ-
ուածն ալ սրբագրութեան կարօտ կ'են-
թադրեմ. վասն զի Գրիգոր Տաթևացիի
ժամանակամիջոցը չի գլեր անոր խմբա-
գրութիւնը, ինչպէս կը հաւատէր մեզի
Լոյս շարաթաթերթը, և շատ ճշմարտին
կուտայ քահանային, ինչ որ ներելի չէ են-
թադրել:

Թէ ինչո՞ւ մեղաց ցուցակները ջնջել
կ'առաջարկէի:

Շատ մը իրաւացի պաշտօններ անմի-
ջապէս պիտի տեսնուին, երբ աչքէ անցուի
այդ ցուցակը. զոր օրինակ արդի դարը
վիճաբանութենէ լոյս կը սպասէ, մինչդեռ
մեր այդ ցուցակին ակօղաւորի խմբագիրը
մեղի կը համարի: Ու դեռ կրնայի վերլու-
ծել և ցոյց տալ շատ մը անհեթեթութիւն-
ներ ալ. բայց կիրթ միտքեր պէտք չունին
մեր ըսելիքներուն. մինակ ես ինծի իրա-
ւունք կուտամ յայտնել թէ մտաւորական
դասին ծաղրին նշաւակ է մեր նուիրական
ժամագիրքին առաջին երեսներուն մէջ դե-
տեղուած այդ յետին դարերու խմբագրու-
թիւն եղող հատուածը, և պէտք է յա-
պաւել միանգամ ընդ միշտ:

Բինկեանի Ս. Հրեշտակապետ եկեղեցիի
կողմնակի խորանին մէկին մէջ ձեռագիր մը
գտայ, որ խուսափեր էր Սրուանձտեանցի
քննութենէն. 500 տարուան հուրթիւն ու-
նէր: Մաշտոց մըն էր այն, որուն մէջ կար
«կարգ զապաշխարողսն արձակելոյ» վեր-
նագրով ընդարձակ հատուած մը, և կը
պարունակէր «Մեղայ» մը բոլորովին պլա-
կերալ մեր հիմակուան ունեցածէն: Քանի՜
կարդացի այնքան ուրախ եղայ, ցոյց տուի
զայն պաշտօնակցիս (հիմակ Արժ. Տէր Պետ-
րոս քհնյ. Գասեան, Առաջնորդական փո-

(*) Շար. քիւ 2266:

խանորդ Ակնայ)։ 1896 թուականի օգոստոսին մէջ էր . դժբախտաբար անմիջապէս չօրինակեցինք զայն . կը յիշեմ միայն անկից մէկ տողը , որ էր՝ «ախորժեմ լսել գուսանական երգոց» : Քանի մը օրեր վերջն էր , որ համիտական խուժանը հիմնադրուեց ըրաւ Բինկեանը . և հոյակապ եկեղեցին այրեացաւ ըրին : Տասը թանկագին ձեռագիրներու կարգին մէջ վտուեր էր նաև Մաշտոցը : Ստոյգ մահուանէ հրաշքով մը ազատուած , երբ լսուէն վար իջայ , աւերուած հայրենիքիս աւերակներուն մէջէն դէպ ուղիղ վազեցի խորանը ու պրպտեցի ձեռագիրը . աւագ որ ամուսնի կոչտի մը վերածուած էր այն : Աղի արցունքներ պոսկեցին աչքերէս . զիմեցի միւս ձեռագիրներուն տեղը քրքրելու , և մոխրակոյտին մէջէն էր որ գտայ նշանուոր ծառընտիրին երած մրկած թղթի այն միակ խանձոտած թերթիկը , որուն վրայ գրուած էր «Արգար Արքայն Ասորոց» հատուածը : Փոքրիկ մխիթարութիւն մը՝ այնքան թանկագին կորուստներու առջեւ : Սր մը երբ Մուշեղ վարդապետ մեզի Առաջնորդ կուգար , անոր ձեռքով նուէր զրկեցի այդ թղթիկը Արմաշի վանահայր Եղիշէ եպիսկոպոսին (այժմ Ամին . Ս . Պատրիարք Հայր) , վասն զի 1887ի Արգարեան խնդրի մէջ ես ալ խառնուած էի վիճաբանութեան , և պաշտպանած էի այն տեսակէտը թէ կրօնական ժողովը իրաւունք չունէր բռնանալու Եղիշէ Հայր սուրբին վրայ , ճշմարտութիւնը խօսած ըլլալուն համար :

Ես այդ թուականէն ցայսօր ուր որ հանդիպեցայ ձեռագիրներու հաւաքածոյնիւր . խնամով պրպտեցի որպէս զի գըտնէի մեր Նախնեաց խմբագրած այդ գեղեցիկ «Մեղայ»ն ու չգտայ . անշուշտ եմ թէ հնագոյն ու ընտիր ձեռագիրներու մէջ զօղուած կան , և զանոնք լոյս աշխարհ հանդիմանն են որ կը պակսին : Իսկ եթէ չկան և մինք կը գտնուինք անդարմանելի կորուստի մը առջեւ , պէտք է ուրեմն հրամայողական պահանջ դարձած յապաւումը ընդունիլ :

Դ .

Միտեւելով ըսն ժամերգութեան մասին մէջ , կ'ըսենք .— Շատ գեղեցիկ կարգադրութիւն մ'է զոր ըրեր են Նախնիք , «Հայր Մեր»ով սկսելով ժամերգութիւնը : Պահել պէտք է զայն , առանց ուշ դնելու բողոքական հեղինակներու դիտողութեանց , որոնց համաձայն իբր թէ օրհնեալ Փրկիչը չէր կամեր որ ամէն ատեն ըսէինք այդ նուիրական աղօթքը . տարօրինակ քննադատութիւն , որ միայն Ս . Գրքի ճոխութիւնը փաստաբանող կողմէն կը խօսուի :

Ապա կը սկսի «Տէր զի բազում եղին» բառերով սկսող Սողմոսը , որուն կցուած են զանազան Սաղմոսներէ մասեր : Ամէն օր անխափան պիտի ըսուի այդ Սաղմոսը , ինչպէս նաև ինն անգամի սահմանուած ժամերգութեանց ամէն Սաղմոսները պիտի ըսուին առանց փոփոխուելու : Պատշաճ է պահել քանի մը Սաղմոսներու շարունակ կրկնուելու պարագան . խնդրական կը գըտնեմ ես ատիկա : Ինչո՞ւ : Ահա՛ մտածումս . — Հայոց Ս . Եկեղեցին գեղեցիկ կարգադրութիւն մը ունի Յինանց օրերու մասին , յորում սահմանած է 40 օրերու ընթացքին մէջ ամբողջ Սաղմոսները կարգաւ (թէև բնաւ չհանդիպեցայ եկեղեցի մը ուր այդ կանոնը խստ յարգուէր) : Արդեօք կարելի չէր , փափաքելի չէր որ այդ ձեւը բոլոր տարիին ամիսներուն վրայ տարածէինք , փոխանակ մի քանի Սաղմոսներու հարկերու որ անգամ կրկնուելուն : Ես կը դիտեմ թէ աս ձեւով Ա . Պիտի խալըսէինք շարունակեալ միաձեւութենէն որ ձանձրոյթ և անտարբերութիւն յառաջ բերէ ունկնդիրներու վրայ , զի պէսպիսութիւնը մարդկային մտքին մէկ պահանջն է : Բ . Մեր դպիրներն ու քահանաները պիտի դադրէին լիութեամբ կարդալու սովորութենէն , ինչ որ բոլոր եկեղեցիներու մէջ հիմակ հաստատուած կանոնի մը ուժը ունի , և Աստուածային այդ քնարերգութիւնը ինկեր է իր շինիչ ու բարերար դիրքէն : Այո՛ , երբ ամէն օր փոխուին Սաղմոսները , թէ՛ լաւ պիտի կարդացուին , թէ՛ փափաքով մտիկ պիտի ըլլուին , և թէ՛ եկեղեցին շինութիւն պիտի առնէ :

«Տէր զի բազում» Սաղմոսէն վերջ սահմանուած է Ծնորհալիին «Յիշեսցուք ի գիշերի» երգը, որուն մէջ Բննաւորը գիտել կուտար յետսամուտ մաս մը, զարթոցեալս ի գրադմանէ, զոր զեղչել և չկարգացուած գեղեցիկ վերջաբանը կարդալ բանաւոր էր:

«Աշխարհ ամենայն» և «Առաւօտ լուսոյ» գեղեցիկ երգերը չըսուած օրերուն համար ժամագիրքին մէջ մէկը կը հրահանգէ 50 կամ 100 հատ Տէր ողորմես ըսել: Համբանքով աղօթքի այդ ձեւը չեմ կարծեր որ բանաւոր համարող գտնուի, քանի որ շատ քաջորոյ է Վարդապետի Լատինացի ջերմեռանդութեան նմանութիւնը, և արդէն իսկ շուտ ըսելու, մէկ չնչով սա չափը աւարտելու աւելի անխմատ աւանդութիւններու կաշկանդումին ներքեւ քահանաները լիբրտուք մըն է որ կ'ընեն և ունկնդիրները տոմ տոմներու դէպ մըն է որ կը լսեն գրեթէ անեղբայր:

Ե.

Կրկնումները.—Ահա մեր Եկեղեցիի ժամերգութեանց երկարաձգումին խոշոր մէկ աղբակը և զոր պաշտպանելու և որուն հետեւելու համար չեմ կարծեր որ արդի Եկեղեցին պարտաւոր զգար ինքզինքը: Լսենք բոլոր աղօթքները, բայց չկրկնենք բանաւոր չէ:

Որպէսզի դիւրին ըմբռնուի մեր գանգատը, ահա հոս կը փորձենք թուագրել մեր Եկեղեցիի ինն ժամերգութեանց մէջ կրկնուած Մաղթանքներու, Քարոզներու և Սաղմոսներու մասերը:

Տէրունական աղօթքը՝ բացում փակումի սկզբունքով 18 անգամներ, ու ալ տեւի: «Ողորմես» սաղմոսը չորս անգամներ: «Սուրբ Աստուած» երգը երեք անգամներ: «Սիրեցի զի լուիցէ» սաղմոսը երեք անգամներ: «Տէր ամենակալ» աղօթքը երկու անգամներ: «Սուրբ ճգնաւորօք» քարոզը երկու անգամներ: «Որ բնակեալ» սաղմոսը երեք անգամներ: «Հոգւոցն հանդուցելոց» մաղթանքը երեք անգամներ: «Տէր հովուեսցէ» սաղմոսը երկու անգամներ: «Ասացուք» քարոզը՝ երկու անգամներ: «Յիշեա տէր զպաշտօնեայս» քարոզը յա-

րակից մաղթանքովը՝ հինգ անգամներ: Ու տան անգամէ աւելի «Եւ եւս միաբան» մասը քարոզներուն, և այլն և այլն:

Ու ժամերգութեան ինն անգամներու կարգադրութիւնը՝ սխալ է արդեօք ենթադրել թէ վանական հաստատութիւններու համար սահմանուած ըլլար սկզբունքով: Արդէն իսկ քաղաքներ և գիւղեր երկու կամ երեք անգամներու վերածած են զայն (միայն Մեծ Պահքի օրերուն երեք անգամ):

Շատ պատշաճ է պահել անխտիան առաւօտ և երեկոյ ժամերգութիւնը, մինչդեռ եկեղեցիի բարեկարգութիւն աղաղակով նորերը չզիջան քննելու թէ Ամերիկայէն եկող նոր առաքեալներու ամէն դիտողութիւն բանաւոր էր, և «սրբագրենք» ըսելով բոլորովին ջնջեցին Նախնեաց օրէնքը:

Պահենք բոլոր մաղթանքները, քարոզները և այլն, սակայն պատշաճ բաշխումով մը, որպէս զի համառօտ լլլան ժամերգութիւնները, ամէն օր նոր, և բնաւ չկրկնենք ո՛ր և իցէ արտասանուած աղօթք միեւնոյն օրուան ժամերգութեանց մէջ. ահա՛ մեր խոնարհ թուիքը, և չեմ կարծեր որ Նախնեաց յիշատակն ու կարգադրութիւնը յարգելու մասին թերացած պիտի սեպուիմ առաջարկովս:

ՎԱՐԳԱՆ ԳՃ. ԱՍԼԱՆԵԱՆ

(Շարունակելի)

ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՑԻ

(Շար. 23րդ թիւէն)

Վերմոնտի բուզըր՝ Հայոց ուղղուած

Ինչպէս առաջ յիշեցինք՝ Սիւնեցիի Կ. Պոլիս գտնուած ժամանակ Գերմանոս Պատրիարքը որ առիթով մը հարցափորձած էր զՍանդիանոս, և տեսնելով անոր անդրդը-

ուելի միայլը իր բոլոր համոզումներուն վրայ՝ զայրացած և հաւատոյ թուղթ մը տուած էր որ տանի Հայաստան։ Ստեփանոս տանելով թուղթը ցոյց տուած էր ժամանակին կաթողիկոսին՝ որ էր Գաւիթ, և յետոյ թարգմանած ու ոլատապահան ալ գրած էր անոր հրամանով։ Այդ թարգմանութեան բնագիրն է որ մեր ձեռքը կը գտնուի՝ Թղթոց Գրքի միւս գրուածներուն հետ՝ որմէ ամփոփ ձեւի տակ կ'ուզենք հերկայացնել Գերմանոսի կարծիքը եկեղեցիի վարդապետութեանց և քրիստոնէական ինդիւիդուալներու վերաբերութեամբ։ Յետոյ յառաջ պիտի բերենք Գերմանոսի առարկութիւններուն պատասխանները, զորս տուած է Ստեփանոս Սիւնեցի։

Գերմանոս առաջին տողերով կը ջանայ պատրաստել միտքերը, երկնային խաղաղութեան ջերմ փափաքող նկատելով ինքզինքը և իր Եկեղեցին, և միւս կողմանէ ցոյց տալով թէ Հայերուն նկատմամբ իր տածած անկեղծ սէրն էր զինքը «Բրիստոս է խաղաղութիւն մեր» սիրուն բացատրութեան տանողը, միեւնոյն ժամանակ ըստ իր կարծեաց առաքելական գործ մը կատարած ըլլալու յաւակնութիւն ալ ցոյց տալով։ Յետոյ խօսելով Աստուծոյ պաշտօնէին այս ներքին յօժարակամութեան վրայ՝ ըստ որում պարտաւոր է նա ո՛չ միայն իր մերձաւորները չզրկել Բանին ճշմարտութենէն, այլ նաեւ ջամբել զայն իրմէ հեռու գտնուողներու՝ կ'անցնի բուն իսկ թուղթին գրութեան շարժառիթին։

Կ'ըսէ թէ Ստեփանոս Աստուածապահ և թագաւորական քաղաքս գտնուած ատեն, խմցանք որ երբ մեր Եկեղեցին հաղորդուելու առաջարկութիւն կ'ըլլայ իրեն՝ յանձն չառնէր. մենք ալ, կ'ըսէ, խոնարհութեամբ կանչեցինք և հարցուցինք իրեն թէ ինչ մտածելով կ'ընես այդ բանը, և գրաւոր խոստովանութիւն մը պահանջելով անկէ, տեղեկացանք որ նա մինչեւ Եփեսոսի Ժողովին սահմանածը կ'ընդունի, և Քաղկեդոնի Ժողովին յիշատակութիւնը բնաւ չընէր։ Ուստի պէտք եղած խրատը տուինք իրեն և յանդիմանեցինք։

Եւ ըստ առաքելական բանին՝ լաւա-

գոյնը ըսելու և գայթակղութեան փոշերը ի բաց խլելու համար, արժան կը դատենք հոս, կ'ըսէ, ներկայացնել ձեզի մեր դաւանութիւնը, ու կը սկսի ի մէջ բերել տաճարիկու նշովքներ, (Գերմանոս այս նշովքները քաղած է Կիւրղի առ Նեստոր գրած թուղթէն), զորս աւելորդ կը համարինք հոս մի առ մի թուել։

Յետոյ երկու բնութեանց խնդրոյն գալով՝ կ'ըսէ. թէ Բրիստոսի վրայ երկու բնութիւն խոստովանելով ուրիշ բան չենք հասկնար բայց միայն սա՛ թէ նա Աստուած ըլլալով և Հօր համագոյ, միշտորդ մը Աստուծոյ և մարդկան, իր վրայ միաւորած մարդկային և աստուածային բնութիւնները իրարու հետ չչփոթեցան, այլ երկու բնութիւններն ալ կատարեալ մնացին ի Բրիստոս, որով և կ'ընդունինք կ'ըսէ, զ'Բրիստոս՝ աստուածութեամբն կատարեալ և մարդկութեամբն կատարեալ, վասնզի, իմաստունն Կիւրղ այնպէս կ'ուսուցանէր թէ մարդկային և աստուածային բնութիւններուն միացումով փոփոխութիւն մը տեղի չունեցաւ, այլ անոնցմէ իւրաքանչիւրը պահեց իր իսկութիւնը։ Նոյնը կը վարդապետէր նաեւ՝ կ'ըսէ՝ Կիւրեղի ուսուցողը, Աթանաս, և Քաղկեդոնի Ժողովն ալ նոյնը ընդունեց և հաստատեց։

Յետոյ իր այս ըսածին ի վկայութիւն յառաջ կը բերէ Ե. Ժողովին վճիռը, ըստ որում նշովեալ պիտի նկատուէր այն՝ որ երկու բնութիւն ընդունելով չէր խոստովաներ զ'Բրիստոս աստուածային բնութեամբն առանձին և մարդկային բնութեամբ առանձին։

Աւելի եւս ապացուցանելու համար իր պաշտպանած դատը, վկայութիւններ յառաջ կը բերէ Գրիգոր աստուածաբանէն, զոր երբեմն ի մէջ բերած էր Կիւրեղ Եփեսոսի Ժողովում։ Ըստ այս վկայութեան՝ Գրիգոր աստուածաբան կ'ընդունի երկու բնութիւն ի Բրիստոս, իբրեւ Աստուած և իբրեւ մարդ, բայց ոչ երկու որդի և ոչ երկու Աստուած։

Գերմանոս միայն ասոնցմով չբաւականանար, այլ յառաջ կը բերէ նաեւ Գրիգոր աստուածաբանի առ Սիկունդոս գրած ա-

ուսման թուղթին մէջ Բրիտանոսի վրայ յայտնապէս երկու բնութիւն խոստովանելը :

Բաց աստի կը խօսի նաեւ ի Բրիտանոս երկու ներգործութիւն դաւանելուն վրայ, և կ'ըսէ թէ ա՛յն ամէն բաները՝ որոնցմով պէտք է Աստուած ճանչցուի Բրիտանոս աստուածաբար կը ներգործէ, և ա՛յն բաները՝ որոնց մէջ անհրաժեշտ էր իբրեւ մարդ երեւիլ, իբրեւ մարդ կը ներգործէ : Վերջապէս տակաւին յառաջ կը բերէ ինչ ինչ պարագաներ ալ՝ զորս երկար պիտի ըլլար մի առ մի թուել, և կը ջանայ զանոնք վկայութիւններով ապացուցանել :

Ի վերջոյ գգուշաւոր դարձուածով մը կը հասկցնէ որ եթէ առաջարկութիւններ և երկբայելի կէտեր ունին Հայք՝ կրնան նամակով մը տեղեկացնել, և մննք պատրաստ ենք, կ'ըսէ, ամէն ատեն հարկ եղած պատասխանը տալու : Իսկ այն կէտերը՝ զորս հակառակ չէք տեսներ ձեր վարդապետութեան՝ ընդունեցէք :

Ապահովապէս, այս տեսակ վարդապետօրէն և պատճառաբանեալ ձեւով զրուած նամակ մը՝ որ առաջին տողէն մինչև վերջինը իր վարդապետութիւնները գրեթէ բռնի ընդունիլ տալու ճիգ մը կ'ընէր, ո՛չ մէկ կերպով ընդունելի պիտի չկրնար ըլլալ, մանաւանդ որ իր պարունակած կարծիքներն ալ ամէն կողմով չէին յարմարեր Հայաստանեայց Եկեղեցւոյ ունեցած կարծիքներուն : Հետեւաբար Ստեփանոս զայն միայն թարգմանելով պիտի չգոհանար, այլ նաեւ իբրեւ Եկեղեցւոյ վարդապետ, պարտաւորեալ պէտք էր զգալ ինքզինքը հարկ եղած պատասխանը տալու, ջանալով բնականաբար իր իսկութեանը մէջ պատկերացնել Հայ Եկեղեցւոյ հարազատ դաւանութիւնը : Եւ իրաւցնէ՝ որովհետեւ Ստեփանոսէ աւելի ձեռնհաս մէկը չկար այդ բանին համար, նա Կաթողիկոսին հրամանով պատասխան մը գրեց Գերմանոսի թուղթին, մի առ մի հերքելով այն առաջարկութիւնները՝ անկէջ ո՛չ նուազ փաստաբանիչ և համոզիչ եղանակով մը :

Այդ պատասխանին օրինակը ունինք նմանապէս Թղթոց Գրքի գրուածներուն մէջ, ուրկէ համառօտակի պիտի քաղենք

դարձեալ գրեալսք քէտերը, կերպով մը դէմ յանդիման բերած ըլլալու համար երկուստեք եղած առարկութիւններն ու պատասխանները :

(Շարունակելի)

ԵԶԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ

ԲԱՐԻՆ ՅԻՍՈՒՍ

«Ե՛ս եմ, մի՛ վախմա՛մ» :

Մատթ. ԺԴ, 27 :

Երբ չը կրնանք սասկաշունչ ու մոլեգին, Դիմագրաւել ծով-աշխարհի մըրըրկին, Պեսրոսին պէս ընկղմելու մօտեմանք, Բարի՛ Յիսուս, Դուն ձեռընեսու կ'ըրաս ցանկ, Կ'ըսես մեղմի՛ւ՝ «Մի՛ վախմա՛մ» :

Երբ բախտի քի՛րս հարուածներէն խոցոսուած, Բանալու ցանկ սիրտերնիս քնդ, ո՛վ Աստուած, Շղթան անվերջ մեր ցաւերուն անխրոով Վեր վերցընենք, ա՛ն, յողորջուն ձեռներով, Կ'ըսես՝ դարման կայ իմ քով :

Երբ կը պատէ վիշտն անսոյգ շուրջ մեր, Կը տուայտն շարաչար մեր հոգիներ, Միշտ դիտելով մուք հորիզոնն այդ անյոյս, Կ'եղես, իսկո՛յն, յայնմէր զուարթ արշալոյս, Բաղդր այս պատգամ՝ Ե՛ս եմ յոյս :

Երբ գործուած զազանային ոճիրներ, Կը պատմուին մանկանց քերեկէն որք անեք, Որոնք բազմած մոխրի վրայ շարունակ, Կուշան..., ասո՛նց կը մօտեմաս սիրտով սա՛մ, Յիսու՛ս, սրբել այդ արցունք :

Երբ կը կիկնէ մեղքի քեռիկն սուր ծանր, Կը կրոնքին սասկի ծուկներն մեր անգոր, Արտայայտել կուզանք մեր զիջել Անմահիդ, Ծննդադիր՝ մեծ յուսով առջեւդ գերք Իւաթի, Կ'արժանացնես ներումի՛դ :

Մարտ

ՍՏ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆԷՍԵԱՆ



ՊԷՇԿԱՄԱՆՆԵՐՈՒ ՈՐԴԵԳԻՐՆԵՐԸ ՀԱՃՆՈՅ ՈՐԲԱՆՈՑԻՆ ՄԷՁ

ՀԱՄԵՐԱՇԻՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԻԿ ՄԷԿ ԱՐԴԻՒՆՔԸ

Այս վայրկենիս աչքի առջև ունիմ լուսանկարը տալիս որբերու, բոլորն ալ զաւակ արիւնի և տրցունքի երկրին՝ Կիլիկիոյ։ Հազարաւորներու մէջէն, որ զուրկ մնացած են հոգածութենէ, և քամած են ու կը քամեն դառնութեան բաժակը ցմբուրու, ասոնք սակաւաթիւ բախտաւորներէն են։ (Ինչ հեգնութիւն ծնողքի անուշ գգուանքներէն այնքան վայրագօրէն զրկուողներու համար)։ Բայց յարաբերաբար բախտաւորներն են ասոնք՝ ուրիշ աւելի՛ դժբախտներու քով։ Բարեսէր ազգայիններու կողմէ որդեգրուած, ու Կիլիկիոյ զանազան որբանոցներուն մէջ խնամուող ու դաստիարակուող որբերուն մէջէն այս տալիս սղենները լաժին ինկած են Պէշիկթա-

շի բարեսէր, պատուական թաղեցիներուն։ Ներկայ տարուոյ սկիզբները Ազգ. Պատրիարքարանի և Կեդր. Որբախնամ Մարմնոյն հրաւէրով, Պէշիկթաշի մէջ եւս կազմուեցաւ մասնաժող մը որբախնամ գործին, անդամակցութեամբ Ազն. Տեարց՝ Յակոբ Կիւլեան (Ատենապետ), Լեւոն Գարակէօղեան (Ատենադպիր), Յովհ. Ալալէմեան (Գանձապետ), Արտաշէս Աւագեան, Արտաշէս Բաղուռնան, Զենոբ Երամեան, Կարապետ Սէտէֆեան, Նշան Խուզիկեան, Նուպար Զիթեան, և Պաղտատար Կիւլիստանեան էֆէնտիներու։ Եւ Պէշիկթաշին, հակառակ իր սյոժմու սակաւաթիւ Հայութեան և հակառակ Պէշիկթաշը հարուստ թաղ մը չնկատուելուն, սիրալիր ընդունելութիւն մը բրաւ Որբախնամ Մասնաժողին կողմէ իրեն եղած նպաստի հրաւէրին, և լիառատ նըպաստեց ու ցարդ կը նպաստէ ամսական կանոնաւոր վճարումներով։

Արդիւնքը մէջտեղն է, համեստ բայց պերճախօս արդիւնք մը: Տասը որբուկները, որոնց պատկերը կը տեսնուի, երախտագիտական նայուածք մը, շնորհակալութեան մրմունջ մը ունին կարծես իրենց անձանօթ բարերարներուն հասցէին:

Ուրախ ենք իմանալով որ նոյն Որբախընամ Մանածիւղը որու աշխատութեանց մէջ քիչ մը թուրութիւն կը նշմարուէր, այս օրերս նոր եռանդով և համերաշխ ոգիով կը շարունակէ իր ջանքերը՝ տեւականապէս ստանձնելու վերոյիշեալ անմեղ տղեկներու զատիարակութեան հոգը: Թարեկան յիսուն օսմ. ոսկիի նպաստով մը: Ազգին ապագան է որ հաստատուն հիմնրու վրայ կը դրուի տղոց զատիարակութեան և հոգածութեան խնամք տարուելով: Կը մաղթենք որ այդ համերաշխութիւնն որ անխախտ կը մնայ որբախնամ գործին շուրջ, անխախտ և հաստատուն մնար ուրիշ ամէն հանրագումար գործերու շուրջ, (դպրոց, եկեղեցի, բարեսիրական ձեռնարկներ ևն.) և թաղային մարմիններ ու թաղեցիներ՝ փոխադարձ իրերահասկացողութեամբ՝ լուսաբանէին մէկգմէկ, ու բարեկամական ոգիով մը և լոկ հանրային շահը աչքի առջեւ ունենալով, բոլորուէին միակ նպատակի մը և ուղղութեան մը շուրջը:

Համերաշխութեան գեղեցիկ արդիւնք մը կայ աւասիկ մէջտեղը: Տասը որբեր և որբուհիներ կը խնամուին Հաճնոյ որբանոցին մէջ, Պէշկիքաջիկեռու անունով: Նոյն համերաշխութիւնը կրնայ շատ աւելի գեղեցիկ արդիւնքներ առաջ բերել:

Ահաւասիկ անուններն այդ որբերուն և որբուհիներուն՝ յարակից ամփոփ ծանօթութիւններով. —

1. Ուխտանա Ղեյեան, 7 տարեկան, որբ ի հօրէ և ի մօրէ:

2. Սիրանոյշ Օրունեան, 8 տարեկան, հայրը՝ Մանուկ՝ անազագործ՝ Ատանայի մէջ սպաննուած. մայրը՝ Զարդար. եղբայր մը ունի 10 տարեկան:

3. Ագապի Պուրճագեան, 12 տարեկան. հայրը՝ լպուտ, մեռած. մայրը Մարիամ. եղբայր մը ունի Հաճնոյ որբանոցը:

4. Սիրանոյշ Ռափայէյեան, 12 տարեկան, հայրը՝ Փանոս՝ Մութաֆ, սպաննուած. մայրը՝ Հեղինէ՝ անդամաւործ: Եղբայր մը ունի Հաճնոյ որբանոցը:

5. Մարիամ Քիրագեան, 10 տարեկան, որբ ի հօրէ:

6. Յարութիւն Արնգարեան, 9 տարեկան. հայրը՝ Համբարձում, դարբին, սպաննուած. մայրը՝ Նուբիցա: Եղբայր մը ունի Սարգիս՝ Հաճնոյ որբանոցը, 10 տարեկան:

7. Ասուր Էօրեանեան, 10 տարեկան: Հայրը՝ Եփրեմ՝ կոշկակար, Ղարս-Բաղարի մօտ սպաննուած: Մայրը՝ Դիսոյ: Ունի երկու քոյր 5 և 12 տարեկան, և երկու եղբայր:

8. Կոստան Մեյիսուեան, 10 տարեկան: Հայրը՝ Յովսէփ՝ մանրավաճառ, մեռած. մայրը՝ Կիւլիզար՝ անդամաւործ: Եղբայր մը ունի երեք տարեկան:

9. Միւսաֆ Էրեկսեկեան, 8 տարեկան: Հայրը՝ Կարապետ՝ անազագործ, Սայ-Կէ-չիտի մէջ սպաննուած: Մայրը՝ Սուլթան: Ունի 3 եղբայր:

10. Աթիսողում Էրեկսեկեան, եղբայրը, 8 տարեկան:

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ի Ն

ԾԻՍԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

ԱՇԽԱՐՀԱԿԱՆԻ ՄԸ ԶԱՅՆԸ

Անըմբռնելի կը թուի մտքիս հետ՝ սա հրապարակ նետուած խնդիրը: Կը խորհիմ թէ այդ բարեկարգութիւնը բուն Մայր ծոցին մէջ գտնուող Հայերուն գոհացում տալու համար է. եթէ ոչ՝ փարախէն դուրս որսացուածներուն համար:

Եթէ Հայ եկեղեցիին հաւատարիմ զաւակներուն գոհացում տալու համար է միայն եղած ջանքը, առ այդ հրապարակաւ եղած առաջարկներէն շատերը աւելորդ են. Հայ ժողովուրդը ո՛չ քնոցին ճայանէն կը խրտչի, և ոչ բաղմամբազ լուսավարութիւններէն կը շլանայ: Եթէ եկեղեցիին մէջ բարեփոխուելու բաներ կան, ա-

նոնք ամուսնական և ձեռնադրութեան երկու խորհուրդներուն կը վերաբերին, և քիչ մըն ալ ապաշխարութեան խորհուրդն: Արդարեւ նախկին Եկեղեցին պարզ էր. այլ յետոյ ծխական բարդութիւններ ընդունեց իւրաքանչիւր լեզուէ ժողովուրդներու հոգեբանական տեսակէտով. մեր Եկեղեցին իր հզօր դրացիին յարմարելու կամ չյարմարելու հարկին տակ՝ անկախութիւնը պահելով հանդերձ. երկու չարեաց փոքրագոյն ընդունելու պէս՝ պատկերներ դրած է Եկեղեցիին մէջ. ինչպէս նաեւ ոսկի և արծաթ խաչներ և աշտանակներու և թանկագին զգեստներու և այլ իրեղէններու ճոխութեամբ երբեմն երբեմն, օրուան տօնին համեմատ, նոր հարսի պէս կը ցուցադրէ ինքզինքը՝ «ի հանդերձ ոսկեյուռս զարդարեալ և պաճուճեալ»: Այս ամէնը սակայն անփառ բաներ են. այս չէ ժողովուրդին ուզածը, ու ժողովուրդը ըսելով զաւառի գիւղական Հայուն է որ կ'աշխարհեմ, ո'չ թէ քաղքենիին, որուն առջև փոխանակ Աստուածամօր պատկերին Զինական ոսկի կուռք մը դիր և անիկայ սիրով պիտի երկրպագէ, փոխանակ Անոր՝ որ «Հոգի է, և երկրպագուններուն պարտ է հագուով երկրպագել նմա» ամէն տեղ:

Եթէ, ըսինք, միայն մեզ՝ Լուսաւորչական նոր անունը կրողներու օգտին է որ պիտի ծառայէ առաջադրուած բարեփոխութիւնը, այն ատեն, Ս. Հա՛րք Համագումարին, առէ՛ք ձեռք Պսակի խորհուրդը. «Հաճոյ է հոգւոյ իմոյ այր և կին բարեպէս հաւանեալք միմեանց». այս քարեպիւր ընդարձակ առումներ ունի. դուք հմուտ էք թէպէտ Եկեղեցիի իրաւարանութեան, բայց ամուսնական կեանքին փորձառութիւններն ուսումնասիրող աշխարհականներուն ալ հարցուցէք, ու հասկցէք թէ ինչպէս և ո՞ր պիտի օրէնք դնելու է որ այր և կին բարեպիւս հաւանին միմեանց, որպէս զի ապագայ ընտանեկան յարկերու քանդուածքին պատճառ չդառնան, ինչպէս կը նեսնեք դժբախտաբար դարձեալ մեծ քաղաքացի մէջ, և ոչ գիւղերունը, ուր երկու սեռն ալ աշխատութեան հետեւելով՝ պարագայ միջոց չունին ապահարդան պահանջելու:

Ամուսնական խնդրոյն առթիւ եղած հրապարակային առաջարկները բաւական լուսաւոր են. գանք ձեռնադրականին: 35 տարեկան պէտք է ըլլայ քահանան՝ առնուազն, բաւական ուսեալ, Լ'նծայարանէ մը ելած, յատուկ որոշուած ու ընծայարան մտած ըլլայ այս ինչ թաղին կամ գիւղին համար. ամսաթուակ ստանալով. վերջնել, գանձանակի, թաղումի և այլն և այլն սովորութիւնները: Պատժական օրէնք սահմանել յանցաւոր քահանայից համար. այրինբը վանքերը դնել, ո'չ թէ ամուսնացնել. կուսակրօնութիւնը հետզհետէ վերջնել, վանքերը՝ այրի քահանաներով կուսակրօն աղօթաւորներ կ'ունենանք, ատիկայ բաւական է մեզ, եթէ փրկութիւննիս ատենց մով է: Կուսակրօնութեան մէջ եպիսկոպոսութիւնը պահել, քարոզը անոր վերապահելով: Եւ քանի որ քարոզ ըսինք, չենք կրնար մոռնալ թէ քարոզն է որ ժողովուրդը պիտի քաշէ Եկեղեցի (*):

Իսկ եթէ կ'ուզուի ծխական յապաւումներով մեր բաժնուած հատուածները միացնել, խելքիս չի գար թէ կաթոլիկը ինչպէս կրնայ ծէսերու փոփոխութեան յարմարիլ. նա ևս իր ծէսերը ունի. և Հռոմ անողոք է կարծեմ: Ուրեմն այդ անցնինք: Իսկ եթէ բողոքականները կ'ուզենք մօտեցնել, այդ բողոքովին անկարելի կը թուի մեզ:

Բաքերդ

Մ. ՍԱՏՈՍԵԱՆ

(*) Յօդուածագիրը ինքզինքին կը հակասէ այստեղ: Եթէ քարոզը միայն եպիսկոպոսին պիտի վերապահենք, ի՞նչպիսի կարելի է ամեն եկեղեցիի մէջ միշտ քարոզել: Ինչո՞ւ քարոզելու կարող քահանաներ չունենանք, եւ ինչո՞ւ քահանայք չարտօնուին քարոզելու: Ծ. Խ.

ՆՈՒՅԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ազն. Յովհաննէս էֆ. Ալալէմճեան տարեկան երկու Տաճար կը նուիրէ զաւառի աղքատիկ վարժարաններու: Կը յատկացընենք մէկ օրինակը Կամախի, իսկ միւսը Սեբաստիոյ Աղաք գիւղի Ազգ. վարժարաններուն:

Գահիրէէն Ազն. Տիար Սեդրաք Դաւիթեան 1 տարեկան Տաճար կը նուիրէ իր բնագաւառին՝ Ակնայ Ազգ. ներսէսեան-Նարեկեան վարժարանին:

ԱՆՏԵՏ ՄԻՏՅԱԹ ԷՖԵՆՏԻ

ԵՒ

ԿԵՋԻՐԵԱՆ ԹԱԴԷՈՍ ՊԱՏՈՒԵԼԻ

Ահաւասիկ նշանաւոր գրագէտ-հրապարակագիր Ահմէտ Միտհաթ Էֆենտիի Կեզիրեան Թադէոս պատուելիի նկատմամբ գրած տղերք, որունց ակնարկուած էր «Տաճար»-ի նախընթաց թուով:

Ահմէտ Միտհաթ Էֆ. իր Լ. վրօքսա պիր ճեպերան գրքին՝ «Կօթէնպուրկի մէջ գիւղեր մը» գլխուն մէջ կը պատմէ իր գրաւոր տեսակցութիւնը՝ Ֆրանսացի համրի մը հետ, որ իր մայրենի լեզուէն զատ գիտէ նաեւ Անգլիերէն և Գերմաներէն լեզուները:

Սա՝ գիտութեանց նախադիտելիքները լաւ մը ուսանելէ վերջ՝ պատմութեան և հնագիտութեան մէջ ունեցած մասնագիտական հմտութեանը շնորհիւ, Կօթէնպուրկ քաղաքին մեծ միջոցին հնագիտական ճիւղին տնօրէնը կ'անուանուի: Միտհաթ Էֆ. սոյն ֆրանսացի մասնագէտին հետ Կօթէնպուրկի մէջ տեսնուած միջոցին է որ աշտուղիկ պատուելին կը յիշէ, որուն մասին սա՝ դնահատական տողերը կը նուիրէ. —

«Պոլիս ճանչցած եմ Թադէոս պատուելի անունով յոգնաբար Հայ մը որ բնաւ լոյսի երես չէ տեսած: Սա՝ իր մայրենի լեզուէն զատ, զոր ուսած է շատ լաւ կերպով. ուսած է նաեւ Օսմաներէն, Պարսկերէն, Ֆրանսերէն և Իտալերէն(*) լեզուները՝ զանոնք խօսելու աստիճան. սակայն յիշեալին ունեցած կարողութիւնը՝ միմիայն սոյն լեզուները խօսելուն մէջ սահմանափակուած մի՛ կարծէք. զանոնք թէ՛ կը խօսի և թէ՛ անոնց գրականութիւնը հիմնովին ուսած է:

«Օսմ. և Պարսկ. լեզուաց մէջ Շ-Շ' օ-յ-ը գրերուն իրարմէ ունեցած ուղղագրական և հնչական տարբերութիւնները գիտէ. իր մատուլը ամենէն դըժ-

ուար ուղղագրութիւններն իսկ կը ցուցնէ. գիտէ նաեւ ֆրանսերէնի մէջ այն գիրերը որոնք թէպէտեւ ըստ կանոնի կը գրուին, սակայն չեն կարդացուիր. վերջապէս իր սովորած լեզուները կը գրէ ու կը կարդայ ըսուելու աստիճան լաւ սովորած է. բաւական լաւ թուրքերէն ոտանաւորներ ալ կ'արտասանէ, և որ տուելին է, ջութակ ալ կ'ածէ:

«Շատ զարմայալի է որ այս մարդուն կուրութիւնը, միւս կողմանէ ալ նիւթական անձուկ վիճակը, իր ուսումնական և գիտական զարգացումին արգելք չեն եղած. քանի՜ քանի անգամներ մեր տանը մէջ հաւաքուած ենք, և իրեն տեսակցութեանն ու խօսքերէն գոհ մնացած ենք, և այն ատիճան որ իրմէ օգտուած իսկ եմ. այն ֆրանսացի ծերունի համրը զոր Կօթէնպուրկ քաղաքին մէջ տեսայ և իրեն հետ տեսնուեցայ, այս կտրգի հրաշալի կերպով արտակարգ իմացականութեան տէր եղողնեւրուն քով երկրորդական տեղ մը կը բռնէ. ասոր հետ ունեցած տեսակցութեանէս ալ հրահանգիչ տպաւորութեան մը տակ գրտնուած եմ:

«Կը խորհիմ թէ մարդ ո՛ր և է քանի մէջ զօրաւոր և վճռական կերպով նպատակի մը ծառայելու է, որպէս զի բաղձացեալ նպատակակէտին հասնի, առանց ընկրկելու ո՛ր և է արգելքէ:

«Ահաւասիկ կոյր մը և համր մը՝ որոնք շատ մը աչք և լեզու. ունեցողներու սովորիլ չյաջողածը սովորելու յաջողած են. հազար երանի իրենց. միթէ այնպէս չէ՞»:

ԱՐԲԱՆԱՄ ԲՆԵՑ. ԷՊԷՆԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

“ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ,, ՇՈԳԵՐ

Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ԶՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Դոհութեամբ կը ծանուցանենք թէ Ս. Պատրիարք Հայրը, որ տկարութեան պատճառով ութ տասն օրէ ի վեր Պատրիարքարան չէր իջներ և անցեալ շաբթու ամ-

(*) Այստեղ կը սխալի մեծանուն գրագէտը. աշտուղիկ պատուելին իսաղեհէն չէր գիտէր, քեռ ջեռմ փափաք ունէր այդ լեզուն, ինչպէս նաեւ անգլիերէնը սորվելու: Ե. ԽՄԲ.

չկրցաւ նախագահել ժողովներու, Գլ. օրէն ի վեր կուգայ Պատրիարքարան: Ն. Սըրբազնութիւնը կիրակի օրը Բիզանդիոնի խմբագիրին հետ տեսակցութեան մը միջոցին յայտարարած է թէ հոգային խնդրոյն և մասնաւորապէս Զարսանճագի խնդրոյն — ուր թէիւ հին բայց հաւաքական զըրկանք մը կայ — կարգադրութիւնէն պիտի հասկցուի թէ իրողութիւններն որքան կը համապատասխանեն նախարարական խոստովներուն և բարի տրամադրութիւններուն: Ս. Պատրիարքն աւելցուցած է թէ «մեր բաղձանքն է որ ժողովուրդը տէր դարձնել իր գոյութեան և ապրուստին բաւականաչափ գետնի մը. եթէ այս իրաւունքէն ալ զրկուի, թշուառ վիճակ մը կը տիրապետէ, որուն չի կրնար հաւանիլ մեր միտքն ու խիղճը»: Գաւառի ապահովութեան մասին Ս. Պատրիարքը գոհութեամբ ծանոյց թէ ժամանակէ մը ի վեր կրկնուող և ապահովութեան գանգատները նուազած են: Մարաշի Պատերազմական Ատենան կողմէ մահուան դատաւարտուած եօթը Զէյթունցիներու համար եղած հետապնդութիւնն հասկցուած է որ կեդրոնին հրահանգով չէ, այլ տեղւոյն վրայ եղած կարգադրութիւն մը: Այս առթիւ Նորին Սրբազնութեան կարծիքն է թէ երկրին արդի կազմակերպութեան մէջ ապակեդրոնացումն օգտակար չպիտի ըլլայ, որովհետեւ հիմա նահանգի մը մէջ պատահած սխալ գործողութեան համար Բ. Դուռ կը դիմենք ու կը բողոքենք, մինչդեռ այն ատեն ամէն բան կախում պիտի ունենայ կուսակալին կամքէն, և եթէ այն ալ անբարեացակամ ոգի մը ունենայ, չպիտի կրնանք բան մը ընել: Ն. Սրբազնութիւնը աւելցուց թէ Վարչութեան անդամներն ալ տեսնելով որ իրենց ջանքերն անմիջական արդիւնք չեն տար, մտադիր են հրաժարիլ, երբ տարին լրացնեն:

Ազգային ներքին խնդրոց անդրադառնալով, Ս. Պատրիարքն յայտարարեց թէ անոնք պէտք է կարգադրութեան մը գան ալիւս, որպէս զի Վարչական ժողովներն ուղղակի աղբին անտեսական զարգացման և բարոյական և խմբակայն յառաջդիմու-

թեան նպաստող գործերով զբաղին: Ն. Սրբազնութիւնը այս առթիւ ծանոյց թէ Ազգը կ'ուզէ Բանկալթիի գերեզմանատան մէջ կառուցանել նաև Պատրիարքարան մը և Կեդր. Վարժարանը: Ներքող բրազ Տընտես. Խորհրդոյ արդիւնաւոր գործունէութեան ի մասին Պատրիարքարանի ելմացոյցին հաւասարակշռութեան: (Անցեալ տարի Օգոստոս ամսուան հասոյթն էր 43829 զրշ.: Այս տարի նոյն ամսուան մէջ բարձրացած է 50,590 զրշ.): Բանկալթիի գերեզմանատան սեփականութեան խնդրոյն առթիւ յայտարարեց թէ մեր սեփականութիւնն է, ժամանակաւ Հայու մը կողմէ գնուած և ազգին նուիրուած: Ու է ապացոյց չկայ թէ Հայ-հռոմէականներ իրենց ննջեցեալները թաղելու համար տեղ մը գնած ըլլան այդ գերեզմանատան մէջ, այլ որովհետեւ ամէնքն ալ Հայ անունով կը ճանչցուէին, բնական է որ իրենց ննջեցեալներն ալ թաղուէին մեր գերեզմանատան մէջ. ասկէ չի կրնար հետեւցուիլ իրենց սեփականութեան իրաւունքը:

Կիլիկիոյ որբանոցներու և այրի կիներու մասին խօսելով Ս. Պատրիարքն յայտարարեց թէ ամենամեծ հոգածութիւն ցոյց պիտի արուի կառավարութիւնէն ստացուած 10,000 ոսկին իր նպատակին ծառայեցնելու: «Կը սոսկամ, ըսաւ, մտածելով որ օր մը գուցէ ազգին դրամներով և այսքան զոհողութիւններով պահուած որբանոցներէն աղբին անպիտան տարրեր դուրս գան»: Ասոր համար ինչ որ պէտք է, հաւաքաբար պիտի մտածուի, այնպէս որ կարելի ըլլայ կառավարութիւնէն պահանջել որ յառաջիկայ տարւոյ պիւտճէին մէջ ալ գումար մը սահմանուի Կիլիկիոյ կարօտութեանց համար, քանի որ փոխան 23000 ոսկիին, այս տարի 10000 ոսկի միայն ստացանք: Արդէն որոշուած էր հինգ տարի վճարել այս գումարները: Ի մօտոյ դիմում պիտի ընենք Հայ երեսփոխանաց, որպէս զի ի մտի ունենան այս կէտը, և այս նպատակին համար նուիրեն իրենց ջանքերը:

* * Ազգ. Վարչութեան կողմէ նշանակուած պատուիրակութիւն մը, զոր կը կազմէին Պատր. Փոխանորդ Տ. Ղեոնդ Ծ. Վ.

Դուրեան Յակոբ էֆ. Պոյաճեան և Արամ էֆ. Հալաճեան շարաթօր այցելից ներքին գործոց նախարար Թալէադէ պէյի և դատական նախարար Նէճմէտտին պէյի: Յոյց տալով Պատրիարքարան հասած տեղեկութիւնը, ըսաւ թէ Կայս. ներման արժանացած եօթը Զէյթունցիներ մահուան դատապարտուած են Մարաշի պատերազմ. տուեսին կողմէ: Նախարարը բացարձակապէս հերքեց այս լուրը, և ըսաւ թէ այսպիսի փխտ վճիռ մը անհնական է: Կայս. Իրատէով ներման արժանացած բանտարկեալներն ո՛չ ոք կրնայ այսպիսի դատապարտութեան մը ենթարկել: Նոյնը կրկնեց նաև Ատանայի Օսմ. երեսփոխանն որ այժմ էնկիւրիի կուսակալ կարգուած է, և ըսաւ որ նոյն իսկ եթէ այդպիսի ապօրէն վճիռ մը տրուած է, բնականաբար երբ Պոլիս հաղորդուի հաստատուելու համար՝ անմիջապէս պիտի ջնջուի: Պատուիրակութիւնը հողային խնդրոյն վրայ ալ խօսելով, բաղմաթիւ Հայերու ձեռքէն յափշտակուած հողերուն համար արդար ու արագ տնօրինութիւն մը խնդրեց: Նախարարը կատարելապէս համամիտ գտնուելով Հայերու իրաւունքին, ըսաւ թէ Բիւրտերուն հատուցում ըլլալով՝ Հայոց հողերէն պիտի հանուին: Պատուիրակութիւնը խօսեցաւ նաև Ատանայի այրիներուն ու որբերուն արգահատելի վիճակին վրայ, և կառավարական նոր օժանդակութիւններու պէտքը շեշտեց: Նախարարն հաւաստեց որ 10 հազար ոսկիէն զատ, որ տրուեցաւ Պատրիարքարանին, 23 հազար ոսկի յատկացուած է եկեղեցիներու և դպրոցներու շինութեան համար, և խոստացաւ ամէն տարի մէյմէկ կարեւոր օգնութիւններ ընել: Թէ՛ ներքին գործոց և թէ՛ գատական նախարարները միևնոյն նպատաւոր և սփոփիչ յայտարարութիւններ ըրին, կը մնայ սպասել անոնց արգիւնաւորման:

* Թուրք թերթերը կը գրեն թէ հողային խնդրոյն համար գաւառները գացող քննիչներն իրենց պաշտօնն աւարտած և տեղեկագիրը զրկած են Բ. Դուռ ու իրենք ալ Տիզրանակերտէ մեկնած են Հալէպ: Բ. Դրան մէջ նոր յանձնաժողով մը

պիտի կազմուի եզեր քննելու համար այս տեղեկագիրը: Այս յանձնաժողովը նկատողութեան պիտի առնէ անշուշտ նոյն խնդրոյն համար Պատրիարքարանի մատուցած մանրամասն վիճակագրութիւնները:

ԱՍԵՐԻԿԱԶԱՅԵՐԸ.—ԵԿԵՂԵՑԱԿԱՆԻ ՍՈՎԸ

Բրովիտէնսի (Ամերիկա) հոգեւոր հովիւ նշանակուած է Սելանիկի նախորդ հովիւ Տ. Սերովբէ քհն. Ներշապուհ, հայրապետական կոնդակով, և այս առթիւ յիշեալ քահանային ալ հայրապետական կոնդակ մը ուղղուած է: Պատրիարքարանէ հեռագրուեցաւ ճանապարհածախուց համար, և կը յուսացուի որ Արժ. Տ. Հայրը յառաջիկայ շաբթու ճամբայ ելլէ դէպ իր նոր պաշտօնատեղին:

Ժամանակ էր որ Բրովիտէնսի պատուական հայ գաղութին ամիսներէ ի վեր ըրած խնդրանքը կատարուէր: Այս շաբթու իսկ խմբագրութիւնն նախակ մը կը ստանար նոյն քաղաքի Ազգ. Եկեղեցւոյ Հոգաբարձութենէն որ Բրովիտէնսի և գրեթէ բոլոր Ամերիկայի Հայերուն ազգ. հոգեւոր բարձրագոյն իշխանութենէն կարծես անտեսուած ըլլալը կը յայտնէր ցաւօք սրտի. կը ծանուցանէր թէ տարին հազիւ անգամ մը, և ան ալ հազար դժուարութեամբ, կարող կ'ըլլան հայ եկեղեցական մը ձեռք ձգել կրօն. արարողութիւններ կատարելու և Ս. Պատարագ մատուցանել տալու համար: Երեխաներ երկար ատեն կը մնան—չատ անգամ ալ կը մեռնին—առանց մկրտութեան, անջեցեալներ կը թաղուին առանց եկեղեցականի, և պսակներ կը կատարուին օտար եկեղեցականներու ձեռամբ: Եւ այս տեղի կ'ունենայ այնպիսի քաղաքի մը մէջ, ուր իբր 3000 հոգիի հայ գաղութ մը կայ, որուն 400ը ընտանիք կազմած: Նամակագիրները վհատութեամբ դիտել կուտային թէ նոյն գաղութը կրօնապէս լքուած է, իրեւ թէ Հայութեան անպէտ մէկ մասը կազմած ըլլար, մինչ այս պատուական գաղութը, Մայր Հայրենիքին ամէն ցաւերուն վշտա-

կից, լիաբուռն նպաստած է միշտ ինքնաբերաբար, բաց ի կրթական գործին համար եղած զոհողութիւններէն, յատուկ միութիւններու ձեռքով:

Ուրախ ենք որ հայրապետական տնօրինութիւնը ճիշտ ժամանակին կը հասնի, ցուցնելու համար թէ սխալ է լքումի կարծիքը, և հոգեւորապէս միախառնելու այդ հեռաւոր պատուական գաղութը, ձեռամբ Տ. Սերովսէ Գն. Ներշապուհի նման կարող և բանիմաց եկեղեցականի մը, որ վստահ ենք թէ պիտի կրնայ ամէն կերպով գոհակ ժողովուրդը, և Հայ Ս. Եկեղեցւոյ փարախը վերադարձնել, ի խնդիր հոգեւոր միախառնութեան օտար Եկեղեցիներու դիմել հակամիտող հաւատացեալները:

Այս առթիւ տեղն է յիշեցնել երկնաւոր Վարդապետին խօսքը. «Հունձք բազումք են և մշակք սակաւք, աղաչեցէք զՏէր հնձոց զի հանցէ մշակս ի հունձս իւր»։ Կարող եկեղեցականի սով կայ բացարձակ, ներքին գաւառներու թէ արտասահմանի մէջ: Եկեղեցական բարեկարգութեան հետ մէկտեղ, և անկէ ալ առաջ, ստիպողական է խորհիլ ընդհ. եկեղեցականութեան, — և մասնաւորապէս քահանայութեան — զարգացման վրայ, կարող, ներկայանալի (représentable) եկեղեցականներ պատրաստելու անհրաժեշտ պէտքին վրայ:

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹԵՆԷ ԴԷՊԻ ԱՇԽԱՐՀԻԿ ԿԵԱՆՔ

Արաբկիրի առաջնորդ Մենրուստան Վ. Աշխարհունի, Ս. Պատրիարք Հօր ուղղութեամբ նամակով մը, — հրատարակուած Ազատական մէջ — կը յայտարարէ թէ չկրնալով այլևս հանդուրժել ներքին յոյզերու և խռովքներու և մշտազրկումի մը եղբերակին, և վախճալով որ մի՛ գուցէ այսուհետեւ եկեղեցւոյ սրբութեան սահմաններն անցնի, մինչև հիմա ապրուած անբասիր կեանք մը ոչնչանայ, և պատճառ տուած ըլլայ ժողովրդեան բարեպաշտական կեանքին խանգարման, այս օրէն իսկ (28 օգոստ. 1910) կը հրաժարի պաշտօնէն և եկեղեցական հոգեւորական աստիճաններէն և կարգէն, և

կը դատուի աշխարհականը չարքը, ուր պիտի կրնայ ծառայել իր սիրեցեալ ազգին և Ս. Եկեղեցւոյն, որուն հարազատ մէկ անդամն ըլլալով դէպի այն իրաւունք և պարտք ունի միանգամայն:

Տեղւոյ անձկութիւնը դժբախտաբար չթոյլատրեց մեզ ամբողջովին արտատպելու կարգաթող վարդապետին նամակը, հուժկու բողոք մը Կուսակրօնութեան դրութեան դէմ, «որ պարտադիր օրէնք մը չէ Աւետարանով» և որուն դիմակալելու համար գերմարդկային էակ մը պէտք է ըլլալ, բնականութենէ վեր զօրեղ բան մը, ինչ որ կարելի չէ:

Ի՞նչ կը խորհին ընթերցողները այս անկեղծ յայտարարութեան վրայ, ի՞նչ կը խորհին եկեղեցական բարեկարգութեան հետամուտ եկեղեցական հայրեր և աշխարհական եղբայրներ:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՅ ԴՆԻ նիստին մէջ Ատենապետ Տօգդ. Սեղբոսեան էֆ. յայտնեց թէ պատիւն ունեցաւ այս օրերս ներկայանալու Գահաժառանգ Եղստեֆ Իզգէտտին էֆ. ի: Նորին Բարձրութիւնը Հայ Ազգին Օսմ. երկրին մատուցած ծառայութիւնները և հայրենասիրական զգացումները գոհութեամբ յիշատակելով անոր վիճակին վրայ տեղեկութիւններ քաղած, և ազգին նկատմամբ իր համակրութիւնը յայտնելով յանձնարարած է միանգամայն իր բարեւները հաղորդել Ս. Պատրիարք Հօր: Ժողովը այս համակրական յայտարարութեանց համար սրտողին շնորհակալութիւն յայտնեց և Տօգդ. Սեղբոսեան էֆ. ի յանձնեց պատեն առթիւ մատուցանել Նորին Բարձրապատուութեան: Արաբկիրի Գաւառական և Վարչական Ժողովները ծանուցանելով Տ. Մենրուստան վարդապետի հրաժարումն եկեղեցականութենէ, իմացուցած էին թէ փոխանորդ կարգուած է Տ. Կորիւն քն. Երամեան. Ժողովը կարգաթողութեան պարագան Կրօն. Ժողովին նկատառման յանձնելով, հաստատեց Տ. Կորիւն քն. ի Առաջն. փոխանորդութիւնը և որոշեց Առաջնորդական նոր ընտրութեան հրահանգ

տալ:—Հաստատեց Տ. Արտաւազդ Վ. Գալէնտէրեանի ընտրութիւնն Եղեւիոյ Առաջնորդութեան որուն կոչուած էր միաձայնութեամբ:—Վաւերացուց Պրուսայի նորընտիր Բաղ. Ժողովին, և Բաղէչի Բաղ. Ժողովի երկու անդամներուն ընտրութիւնը:—Կամախի Վիճակին Առաջն. տեղապահ կարգեց Երուսաղէմի միաբաններէն Տ. Մելքիսեդեկ Վ. Հովիւեանը:—Ճ. Գարահիսարի Առաջն. Փոխանորդը վերստին հրաժարական զրկած էր: Ժողովը գնահատելով անոր բարւոյր պաշտօնավարութիւնը մերժեց հրաժարականը և որոշեց հրաւիրել շարունակել պաշտօնը:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ԴՆԻՍԻՍԻՆ մէջ նկատելով որ Եկեղեցական բարենորոգման հարցին նկատմամբ գաւառական հոգեւոր իշխանութեանց զրկած Պատր. շրջաբերականին պատասխան-տեղեկագիրները դեռ չեն հասած ամբողջովին, որոշեց Համագումար Ժողովոյ նիստին օրը ժամանակի մը համար յետաձգել, մինչեւ որ համին այդ տեղեկագիրները:—Ժողովը Հայրապետական կրկին կոնդակներով Ամերիկայի Փրովիտէնս և Ուսգըր քաղաքներու հոգեւոր պաշտօնայ կարգուած Տ. Սերովբէ Ներշապուհ և Տ. Մատթէոս Մանուկեան քահանաները հրաւիրեց պատրաստուիլ փութով մեկնելու համար իրենց նոր պաշտօնատեղին:—Վեհ. Հայրապետը յատուկ կոնդակով մը Եղեւիոյ Առաջնորդ Տ. Արտաւազդ Մ. Վ. Գալէնտէրեանի վարդապետական ականակուռ լանջախաչ շնորհած էր: Ժողովը որոշեց արձանագրել:—Արաքկիւրի Առաջնորդ Տ. Մեհրուժան Վ. ընդարձակ գրով մը իր հրաժարականը մատուցած էր եկեղեցականութենէ, կամովին թողով իր կարգը. Ժողովը որոշեց ընդունիլ հրաժարականն, և ըստ այնմ հրատարակել Ժողովրդեան որ յետ այսու յիշեալ ճանչցուի իբրեւ աշխարհական Տիգրան Աշխարհունի անունով:—Սիլիվրիի եկեղեցւոյն համար Ս. Յակոբ Մծքնայ հայրապետի պատկեր մը ներկայացուած էր: Ժողովը Հայ Եկեղեցւոյ կանոնաց համաձայն գտնելով, օծումը արտօնեց:—Ժողովը Պայքնտըրի և Բէմախի Ս. Եկեղեցւոյ երկու ըն-

ծայացուներու՝ Տիրացու Միհրդատ Բէսեւեանի և Յարութիւն Միլիտոսեանի քահանայական ձեռնադրութիւնը յանձնեց Տ. Մաղաքիա Եպ. Տէրունեանի:—Ժողովը Արմաշի փոխ. վանահայր Տ. Մեսրոպ Մ. Վ. Նարոյեանի և Բէօթահիոյ Առաջնորդ Պարգեւ Մ. Վ. Դանիէլեանի Եկեղեցական բարենորոգման մասին տեղեկագիրները որոշեց Համագումար Ժողովին ենթարկել:—Ժողովը իր շրջաբերականին ի պատասխան Բերայի, Ենիգաբուրի, Գառ գիւղի, Թօփ գաւառի, Դումգաբուրի գուբարի Թաղ. Խորհուրդներու գիրքերէն գոհութեամբ տեղեկացաւ թէ նոյն թաղերու Ազգ. երկսեռ վարժարանաց մէջ կ'աւանդուի Կրօնի ուսման և բարոյագիտութեան կարեւոր ճիւղերը, քարոզիչներու և քահանաներու միջոցաւ:

ԴՊԻՄՆԵՐԸ ԶԵՐՄ ԵՆ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԵՆԷ.—Զինուորական պաշտօնէութենէն եղած հարցումի մը վրայ Դատական Նախարարութիւնը ներկայացուած պատր. թագրիւններու նայելով՝ պատասխանած է թէ զինուորութենէ զերծ կրօնաւորները երեք աստիճան ունին. այն է՝ Պատրիարքները և Առաջնորդները, 2. Կրօնաւորները (վարդապետ և քահանայ) և 3. Դպիրները (չէմմաս): Սարկաւազները քահանայութեան ընտրելի կը սեպուին, իսկ դպիրներն են որ քահանային հետ կը կը կարգան. ուրեմն պէտք է Պատրիարքարանէն վկայուած դպիրները զերծ մնան զինուորութենէ: Պետական Խորհուրդը որուն զրկուած էր զինուորական օրէնքի այս կէտին վերաբերեալ յօդուածը, համամիտ գտնուած է Դատական պաշտօնատան:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԲԷՆՆ. ԷԲՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՐԱՍԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԲԷՆՆ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զաւմաֆճըար, Յակոբեան խան

RECEIVED

1880

RECEIVED

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880


1880

1880

1880

1880

1880



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԸԼԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — ԿՐՈՆԻ ԴԱՆԵՐ, ՔՐԻՍՏՈՆԵԱՆԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՎԱՐՊԱՍԵՏՈՒՅԸ: ԴԻՆ 5 ՂՐԶ.:

ՆՈՅՆ. — ԿՐՈՆԻ ԴԱՆԵՐ, ՔՐԻՍՏՈՆԵԱՆԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ: ԴԻՆ 5 ՂՐԶ.:

Տաղանդաւոր հեղինակը, երկրորդական վարժարաններու և բարձրագոյն կարգերու համար ֆրանս. լաւագոյն հեղինակներու հետեւողութեամբ, և Հայ Եկեղեցւոյ վարդապետութեանց համաձայն պատրաստած է այն երկու հատոր դասագիրքերը կրօնական և բարոյական ուսմանց, որոնք իրենց ամփոփ ձեւին տակ այնքան լաւ կերպով կը խտացնեն քրիստոնէական բարոյական և եկեղեցական վարդապետութիւնները, ցարդ հրատարակուած դասագիրքերուն մէջ լաւագոյն տեղ մը գրաւելով: Ջերմապէս կը յանձնարարուի կրթական վարիչներուն: Երկու գործերն ալ վաւերացած են Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօն. Ժողովէն:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ. — ԳԱՆՃԱՐԱՆ, ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ, տարրական դասընթացք, 5 ՂՐԶ.:

Նոյն, միջին դասընթացք, Գ. տպագրութիւն, 8 ՂՐԶ.:

Ծանօթ գրող Արամ էֆ. Անտոնեանի սոյն ընթերցանութեան գիրքերը, ճաշակաւոր և գիտակից ընտրութեամբ եղած քաղուածներ՝ Հայ և օտար լաւագոյն հեղինակներէ, կը յանձնարարուին դպրոցական վարիչներուն, իրենց մաքուր տպագրութեամբ (Օ. Արզուման) և այն մեթոտիկ ուղղութեամբ որ Գանձարանի առանձնայատուկ առաւելութիւնն եղած է, և ապահոված է անոր յաջողութիւնը: 5—1

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

(Վկայեալ Կայսերական քոչկական վարժարանէն)

Պէշկըպաշ, Հայոց Եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակուայի և լինտերու ամէն տեսակ հիւանդութիւններ. կը չինէ ընականին յար և նման ակուաներ ֆաուշուի կամ ոսկի փրաֆի վրայ: Չափէն աւելի փտած ակուաները ֆուոսնէ կ'ընէ. կը չինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ քոսսըլենէ:

Հիւանդ կ'ընդունի ամէն երեկոյ ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.): Ուրիշ ատեններ՝ մասնաւոր ժամադրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի:

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

Երիտասարդ Արմաշական Տ. Արտաւազդ Մ. Վ. Գալէնտէրեան, իր այս հրատարակութեամբ կը յայտնուի իբրեւ երաժշտագէտ: Սարսուռներ՝ անմահ բանաստեղծ Դուրեանի Սեւ Հոդերի քերթուածներն են եղանակաւորուած Տ. Արտաւազդ Վ. է և դաշնաւորուած Բրօֆ. Արշակ Թ. Տաղլըեանէ: Կը բաղկանայ հետեւեալ քերթուածներէն. Կոյր զինուորը (ողբերգ), Վրէժ (աղմերգ եռաձայն), Լալոնք (ողբերգ) և Ստուերները Հայաստանին (ողբերգ քառաձայն). մաքուր վիմագրութեամբ հրատարակուած կը ծախուի գին 8 ՂՐԶ. և արժանի է ամէն երաժշտասէրի դաշնակին վրայ գտնուելու:

ՀՄԱՅՅԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

% 30 գեղջ

Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլիւ խան Փափազեան գրատուն: